ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտի 2018 թվականի N 41-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ 50% ԵՎ ԱՎԵԼԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «իա» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի մարտի 12-ի N 548-Ա հրամանի 2-րդ կետի 2-րդ ենթակետը՝

ո ր ո շ ու մ ե մ.

Սահմանել մարզպետարանի համակարգի 50% և ավելի պետական բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների տնօրենների աշխատանքի վարձատրման չափաբաժիններ.

1. Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ մինչև 10% վճարովի ծառայությունների ծավալի աճի դեպքում

1) ընթացիկ տարում մինչև 25,0 մլն. ամսական վճարովի ծառայությունների գումարից 2%,

2) ընթացիկ տարում 25,0 մլն. և ավելի ամսական վճարովի ծառայությունների գումարից 2,4%:

2. Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ 10% և ավելի վճարովի ծառայությունների ծավալի աճի դեպքում

1) ընթացիկ տարում մինչև 25,0 մլն. ամսական վճարովի ծառայությունների գումարից 3%,

2) ընթացիկ տարում 25,0 մլն. և ավելի ամսական վճարովի ծառայությունների գումարից 3,5%:

3. Սույն որոշումը տարածվում է 2018 թվականի ապրիլի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ — Վ. ՀԱԿՈԲՅԱՆ